

2019 թվականի դեկտեմբերի 18-ին Արմավիրի համայնքապետարանում կազմակերպվեց Արմավիր համայնքի 2020 թվականի բյուջեի նախագծի հանրային քննարկում, որին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ, ՋԼՄ ներկայացուցիչներ: Քննարկումն առցանց հեռարձակվում էր, որին իրենց հարցերով մասնակցում էին բնակիչները: Բյուջեի նախագիծը հանգամանորեն ներկայացրեց համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանը: Նա նշեց, որ համայնքի բյուջեն 2020 թվականին առաջին անգամ հատում է 1 մլրդ.-ի սահմանը և այն նախնական հաշվարկով կազմում է 1062725.2 դրամ: Դ. Խուդաթյանը ներկայացրեց, որ «Բարեկարգում տնօրինության» համար նախատեսվում է ձեռք բերել նոր տեխնիկա, մեքենամեխանիզմ, որը կնպաստի աղբահանության աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, համայնքի սանիտարական վիճակի բարելավմանը:

Նշվեց, որ շարունակական աշխատանքներ են տարվելու նաև քաղաքի տարբեր փողոցների լուսավորության համակարգի վերականգնման հետ կապված: Նշվեց, որ բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգումը նախատեսվում է ոչ բյուջեի միջոցներով, այլ հնարավորության դեպքում հատուկ ծրագրերով: Շարունակվելու են աշխատանքները նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայամանների բարելավման հետ կապված: Դ. Խուդաթյանը նշեց, որ 2020 թվականի բյուջեով պլանավորված է Արմավիր համայնքի թիվ 4, թիվ 8, թիվ 9 և թիվ 10 մանկապարտեզների 12 ամսյա անընդմեջ աշխատանքների կազմակերպման հետ կապված ֆինանսավորումը: Նշվեց նաև, որ մյուս մանկապարտեզներում ևս նախատեսվում է վերանորոգման և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ, որի արդյունքում 2021թ. ևս մի քանի մանկապարտեզներ կաշխատեն 12 ամսյա ռեժիմով: Նա հավելեց, որ գործող մանկապարտեզներում ապրիլ ամսից լրացուցիչ խմբեր են ավելանալու: Նա շատ կարևորեց եկամուտների 16% աճը, որը կնպաստի նոր ծախսերի՝ ավելացմանը, նոր աշխատանքների կատարմանը և աշխատավարձերի բարձրացմանը:

Քննարկման ընթացքում կարևորվեց պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցությունը և շեշտը դրվեց սուբվենցիոն ծրագրերով 2020թ. համայնքում իրականացվող ծրագրերի ապահովումը՝ մասնավորապես Բաղրամյան փողոցի բազմաբնակարան շենքերի թվով 10-12 բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքների կատարման ապահովումը: Համագործակցության այդ համատեքստում կարևորվեց Արմավիր քաղաքի Մ. Հերացու փողոց 5 հասցեում գտնվող բնակելի շենքի վերակառուցման և բնակիչներին մասնավոր ներդրողի կողմից բնակարաններով ապահովելու կարևորագույն խնդիրը:

Համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանը նշեց, որ 2020 թվականի բյուջեով նախատեսվում է համայնքապետարանի ինչպես նաև ենթակա կառույցների աշխատակիցների աշխատավարձերի բարձրացում:

Բյուջեի նախագծի վերաբերյալ եղան բազմաթիվ հարցադրումներ՝ հատկապես ՁԼՄ ներկայացուցիչների կողմից, որոնց համայնքի ղեկավարի և ֆինանսիստի կողմից տրվեցին պատասխաններ:

Համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց Արմավիր համայնքի ազգաբնակչությանը, որ համատեղ աշխատանքի, իրենց կողմից հարկային պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու միջոցով մեծ մասնակցություն են ցուցաբերում համայնքում իրականացվող բազմաթիվ ծրագրերի իրականացմանը, նպաստելով համայնքի շարունակական զարգացման ծրագրերին: